նրան ճանաչողների, հարյուրավոր սաների և ապագա սերունդների սրտերում:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
Կրթության և գիտության նախարարություն
Երևանի պետական համալսարան
ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունք
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Մեծ գիտնականների ու գործիչների երկրային կյանքի ավարտն առիթ է գառնում մեկ անգամ ևս անդրադառնալու նրանց կյանքին ու գործունեությանը, հանրագումարի բերելու և գնահատելու նրանց անցած ճանապարհը: Գևորգ Ջահուկյանը հայագիտության այն երախտավորներից է, որոնց գիտական վաստակը տարիների հետ չի խամրելու, այլ ավելի է ծավալվելու, բյուրեղանալու և արժեքավորվելու:

Գևորգ Ջահուկյանի կյանքը հարուստ չէ արտաքին փաստերով և իրադարձություններով, բայց այն օրինակ է ներքին լարված ու հարատև աշխատանքի, անշեղ ու վերընթաց կատարելագործման, նվիրումի ու ինքնահաստատման և որպես այդ ամենի արդյունք՝ գնահատանքի ու ճանաչման: Եվ զարմանալի չէ, որ իր բազմաբեղուն կյանքի ընթացքում նա վաստակել է գիտական աստիճաններ ու կոչումներ, վարել է պաշտոններ, ստացել է շքանշաններ ու պարգևներ, վայելել իր աշակերտների ու գործընկերների անկեղծ հիացմունքն ու սերը: Գ. Ջահուկյանն այն բացառիկ հետազոտողներից է, որոնց գիտական ուսումնասիրությունների ոլորտը աչքի է ընկնում արտակարգ լայնությամբ ու խորությամբ: Հայագիտության բոլոր ճյուղերում, ընդհանուր լեզվաբանության և լեզուների համեմատական քննության բնագավառներում նա հանգես է եկել հիմնարար աշխատություններով, որոնք դարձել են ուղենիշ ու ելակետ հայ լեզվաբանների ներկա ու հաջորդ սերունդների համար: Նրա գիտական աշխատանքների սոսկ թվարկումն իսկ անհնար է այս փոքրիկ խոսքում, բայց չի կարելի չնշել, որ գիտնականին հետաքրքրող բոլոր հարցերում նա ասել է իր նոր խոսքը, նշել նոր ուղիներ, կիրառել նոր մեթոդներ:

Կուզենայի հիշատակել լեզվաբանության տարբեր բնագավառներում Ջահուկյանի բերած նորությունների թեկուզ մի փոքր մասը միայն: Հայոց լեզվի պատմության բնագավառում նա մշակել է հայերենի պատմական զարգացման գիտական շրջանաբաժանումը, որն այսօր ընդունված է բոլոր հայագետների կողմից առանց բացառության: Գրել է հայերենի նախագրային շրջանի լիակատար ծավալուն պատմությունը՝ սկսած հնդեվրոպական նախալեզվից մինչև գրի առնվելու պահը, առաջին անգամ հայերենի նկատմամբ կիրառել է լեզվաժամանակագրության մեթոդը, մանրամասն քննարկել ու գնահատել աշխարհաբարի զարգացման ընթացքի վերաբերյալ եղած տեսությունները:

Հայ բարբառագիտության բնագավառում ստեղծել է բարբառագիտական նոր գիտակարգ՝ վիճակագրական բարբառագիտություն, որի օգնությամբ թվական ճշգրիտ տվյալներով կարելի է որոշել բարբառային յուրաքանչյուր միավորի տեղն ու հարաբերակցությունը մյուս բարբառների ու խոսվածքների հետ, տվել է բարբառների տիպաբանական-ձևաբանական դասակարգման իր տարբերակը, որոշել հայերենի զարգացման տարբեր շրջաններում բարբառների գոյության պայմաններն ու իրադրությունը:

Հայերենի համեմատական ուսումնասիրությունն այն բնագավառն է, ուր առանձնահատուկ կերպով փայլեցին Ջահուկյանի հետազոտական ձիրքը, բացառիկ գիտելիքները, լայն մտահորիզոնը, երևույթների խորքը թափանցելու նրա կարողությունը: Թվում է, մեկ մարդու ուժերից վեր կլիներ ուսումնասիրել և ներկայացնել հայերենի առնչությունները հնդեվրոպական և այլ ընտանիքների պատկանող բազմաթիվ հին ու հնագույն լեզուների հետ, ճշգրտել հայերենի տարածքային գիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում, որոշել հայերենի հնդեվրոպական և խուռաուրարտական ենթաշերտերը, որոնել ու հայտնաբերել հայերենից ուրարտերենին, խեթերենին և այլ լեզուների անցած փոխառություններ, տալ բազմաթիվ նոր ստուգաբանություններ, ավելին, դուրս գալ հայերենի սահմաններից և իր խոսքն ասել այլ լեզուների մասին, վերծանել Կիպրոսի արձանագրությունների լեզուն, որոշել կիմերերենի գիրքը, ավելի լայն հայացքով որոշել հնդեվրոպական լեզվաընտանիքի հեռավոր ցեղակցությունը, արժեքավորել նոստրատիկ լեզվաբանությունը, առաջարկել հնդեվրոպական նախալեզվի վերականգնման տարբերակային վարկածը և այլն, և այս ամենը տարիներ հետո ամփոփել հայերենի համեմատական քերականությանը և նախագրային ժամանակաշրջանի պատմությանը նվիրված հիմնարար ստվարածավալ հատորներում, որոնք այսօր դարձել են դասագիրք հայերենի համեմատական քննությամբ զբաղվող լեզվաբանների ներկա ու հաջորդ սերունդների համար:

Գիտնականի վերջին աշխատանքն է հայերենի ստուգաբանական նոր բառարանը, որը նորագույն փաստերի հիման վրա հայերենի բառապաշարի ծագումնաբանական շերտերի որոշումով և ճշգրտված ու նոր ստուգաբանություններով մեծ ներդրում կլինի հայ բառարանագրության և հայերենի պատմահամեմատական ուսումնասիրության մեջ: Ցավոք, հեղինակը չտեսավ գրա հրատարակության ավարտը, բայց իր աշակերտների ջանքերով աշխատանքը կամբողջանա և լույս կընծայվի ամենամոտ ապագայում: Ժամանակակից հայերենի տեսության բնագավառում Ջահուկյանը կիրառել է լեզվի կառուցվածքի նկարագրության նոր մեթոդներ, առանձնացրել ու հիմնավորել քերականական նոր կարգեր, համընդհանուր լեզվաբանական կաղապարի հիման վրա ուսումնասիրել արդի հայերենի իմաստաբանությունն ու բառակազմությունը, տվել շարահյուսության հարցերի նոր մեկնաբանումներ: Նույնքան արժեքավոր են և ինքնատիպ նրա ուսումնասիրությունները լեզվաբանության տեսության և պատմության ասպարեզում: Նրա երկհատոր «Լեզվաբանության պատմությունը» մինչև օրս մնում է ամենակատարյալը լեզվաբանական ուսմունքների պատմությանը նվիրված գործերի մեջ ոչ միայն մեզանում: Տեսական լեզ-

վաբանության հարցերից Ջահուկյանի երկերում նոր լուսաբանություն են ստանում լեզվի ե. խոսքի փոխհարաբերության, լեզվական մակարգակների, լեզվական միավորների և դրանց տարբերակիչ հատկանիշների, քերականական կարգերի, լեզվաբանական հետազոտության մեթոդների, լեզվաբանության կառուցվածքի և անդրլեզվաբանության և ուրիշ շատ ու շատ կարևոր հիմնահարցեր: Նրա ստեղծած լեզվաբանական համընդհանուր տեսությունը և կաղապարը լայն հորիզոններ են բացում լեզուների տիպաբանության, իմացաբանական ու լեզվաբանական կարգերի քննության, լեզվական երևույթների անհակասական ու լիակատար նկարագրության համար:

Ջահուկյանի ուշադրությունից չեն վրիպել և գպրոցի խնդիրները: Նա գրել է ոճագիտության ձեռնարկ բարձր դասարանցիների համար, մասնակցել բուհական դասագրքերի ստեղծմանը: Լայն ընթերցողի համար նախատեսված «Զրույցներ հայոց լեզվի մասին» աշխատությունը պետք է դառնա ամեն հայի սեղանի գիրքը: Բազում են Ջահուկյանի հետևորդներն ու աշակերտները, որոնցից շատերն իրենք այսօր նշանավոր գիտնականներ են: Հայ լեզվաբանների համար Ջահուկյանը միշտ օրինակ էր ու չափանիշ, բարձրագույն հեղինակություն ու փնտրված խորհրդատու:

Մեծ է նրա դերը նաև հայ լեզվաբանների ուժերի համախմբման, հետազոտական նոր մեթոդների և ուղղությունների արմատավորման բնագավառում: Ավելի քան մի քառասնամյակ աշխատելով Հայաստանի Հանրապետության ազգային ակադեմիայի լեզվաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում՝ և մոտ վաթսուն տարի դասավանդելով Երևանի պետական համալսարանում՝ նա իր դիտելիքները, փորձը և գիտության կազմակերպչի ձիրքն ի սպաս է դրել լեզվաբանության տարբեր ճյուղերի զարգացմանը, մատնացույց է արել հայագիտության առջև ծառացած խնդիրները, նախանշել աշխատանքների հիմնական ուղղությունները, պատրաստել երիտասարդ լեզվաբանների մի ողջ սերունդ: Համալսարանում և այլ բուհերում նրա մանկավարժական աշխատանքի շնորհիվ աճել են բազմաթիվ մասնագետներ, որոնք նրա ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ դարձել են գիտության դոկտորներ ու թեկնածուներ:

Ջահուկյանի աշխատությունները, սկսած ամփոփ հոդվածից մինչև մեծադիր հատորներ, միշտ շարժել են գիտական հասարակայնության հետաքրքրությունը, հուշել են նոր մտքեր ու գաղափարներ:

Կանցնեն տարիներ, բայց Գևորգ Ջահուկյանի գիտական ժառանգությունը կմնա այն հորդահոս աղբյուրը, որից կսնվեն հայագետների շատ սերունդներ:

ԼԻԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ